



ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ԶԱՐՈՋ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ



նունդ է այսօր, հունվարի 6-ը,
«Տօն աստուածայայտնութեան
Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի»:

Գարնանային ջերմ, արևոտ եղանակ:

Առավոտ կանուխ Մայր Տաճարում պաշտը-
վում է ծննդյան հատուկ ժամերգությունը,
ողջ միաբանության և եւանդոլության մաս-
նակցությամբ:

Ժամը 11-ին հնչում են Մայր Տաճարի դան-
գերը, ավետավոր և զվարթ:

Վեհափառ Հայրապետը, եկեղեցական թա-
փորով և ամպհովանու տակ, նոր Վեհարա-
նից առաջնորդվում է Մայր Տաճար, մատու-
ցելու Ս. Ծննդյան հանդիսավոր պատարագը:

Վանքի շրջափակը, Տաճարը լիքն են ուխ-
տավորներով և հավատացյալներով: Մայր
Տաճարի աջակողմյան և ձախակողմյան դա-
սերում տեղ են գրավել Ստամբուլից, Իրանից,
Ամերիկայից եկած ուխտավորներ, Գերագույն
Հոգևոր Խորհրդի անդամներ, Հոգևոր Ճեմա-
րանի դասախոսներ, վանքի պաշտոնեությունը
և այլ պաշտոնական անձինք:

Սկսվում է սուրբ պատարագը:

Ս. Սեղանին սպասարկում են գերաշնորհ
Տ. Հայկազուն և Տ. Ասողիկ սրբազանները,
հոգեշնորհ Տ. Մեսրոպ և Տ. Մուշեղ վարդա-
պետները, Տ. Արսեն արեղան, արժանապա-
տիվ Տ. Հովհաննես քահանա Մարությանը և
սարկավազների խումբը:

Մայր Տաճարի երգչախումբը, խմբավար
Խորեն Հակոբյանի ղեկավարությամբ, կատա-
րում է սուրբ պատարագի Կոմիտասյան քա-
ռաձայն երգեցողությունը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհա-
փառ Հայրապետը օրվա տոնի համամարդ-
կային, հոգևոր և բարոյական մեծ նշանա-
կության մասին, համեմված կրոնաբույր և
խաղաղասիրական խոհերով:

«Քրիստոս ծնաւ և յալտեսցաւ»:

Ծնավ Արեգակը արդարության: Ծնավ Իշ-
խանը խաղաղության, Հրեշտակը սիրո:

Ծնավ Փրկիչը ազգի մարդկան:

Քրիստոսի ծնունդով, երկինք ավետեց երկրին՝
«Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, յերկիր խա-
ղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Նոր տարվան սեմին, մեր հուսացյալ հոգի-
ները վերստին կյսեն աստվածառաք մեծ ու
փրկարար այս պատգամը, վասնպի ինչպես երկու
հազար տարիներ առաջ, և ինչպես երկու հազար
տարիներ շարունակ, այսօր ալ մենք բոլորս և
համայն մարդկությունը կըղծանք իրականացած
տեսնել մեր կյանքի ոսկի երազը՝ խաղաղու-
թյունը աշխարհին:

Բոլոր բարի կամեցողության տեր մարդոց
խղճի սեպուռ պարտքն է, բայց մանավանդ մեր՝
հոգևորականներուս սուրբ առաքելությունը՝ մեր
մտածումի ու գործունեության առանցքը դարձ-
նել խաղաղության գործը, պի Աստված «խա-

ղաղութեան Աստուած է», զի «Աստուած սեր է», և «զի ոչ է արքայութիւն Աստուծոյ կերակուր և բնայելի, այլ արդարութիւն և խնդութիւն և խաղաղութիւն ի Հոգին Սուրբ» (Հռոմ. ԺԴ. 17) :

Անցնող 1962 տարին եղավ տարի մը՝ խաղաղութեան ուժերու առավել միավորման ու առավել ամրապնդման: Եղավ տարի մը խաղաղութեան հաղթանակի:

Անցնող տարին ապացուցուց մանավանդ, թե պատերազմը ոչ միայն անխուսափելի չէ, այլ թե՛ խաղաղութիւնը հնարավոր է:

Հարկ է միայն, որ մարդիկ, մանավանդ պետութեան ղեկավարները, ականջ դնեն ժողովուրդներու սրտին և գործեն բարոյական պատվիրաններու լույսի ներքև:

Ատոմական մեր դարաշրջանին մեջ, խաղաղութիւնը պահպանել՝ երաշխիք է և ապացույց ո՛չ միայն բարոյական հեղինակութեան և քաղաքական իմաստութեան, այլև ռազմական հպարտութեան: Մեր օրերուն ով ճշմարտապէս հպարտ է՝ խաղաղութեան համար կգործէ: Վերջին միջազգային շատ վտանգավոր տագնապի օրերուն Մենք հոգեպէս մխիթարվեցանք ու երախտապարտ եղանք մեր պետութեան, որ փնաթափ ըրավ պատերազմը և խաղաղութիւն պարգևեց ամբողջ աշխարհին:

Խաղաղութեան սպիտակ աղավախն իր մաքուր թևերը տարածեց դեպի բոլոր հորիզոնները և կենաց լույս ու խնդութիւն սփռեց մարդկութեան վրա իբրև երկնային օրհնություն:

Աղոթենք, աղոթենք ջարմապէս, որպէսզի խաղաղութեան բարի աղավախն այլևս երբեք, երբեք արյունով չներկվի, աշխարհի վրա ոչ մեկ տեղ:

Հայաստանյայց Եկեղեցին և Մենք, իբրև Հայոց Հայրապետ, Ս. Էջմիածնի կամարներուն ներքև պիտի մնանք միշտ անձանձուկ աղոթող աշխարհի խաղաղութեան համար: Մենք, որ իբրև Եկեղեցի ու ժողովուրդ, մեր ողբերգական պատմութեան ճանապարհին այնքան տառապած ենք և քանիցս ազդովին նախառակված պատերազմներու և արշավանքներու ջրջաններուն, գուցե ավելի քան որևէ ժողովուրդ, պետք է մաղթենք և պէտք է տքնինք և պէտք է մարտնչինք, որպէսզի խաղաղութիւն փրկե այս աշխարհին վրա, որպէսզի խաղաղութիւն տիրե նաև մեր հայրենի երկրին մեջ, մեր այսօրվան վերածնած ջեն ու ծաղկած Մայր հողին վրայ, ուր Մեր ժողովուրդի պալականները ահա ավելի քան քառա-

սուն տարիներն ի վեր, իրենց հուժկու բազուկներով ու իրենց մտքի լույսով, հայոց նոր կյանքը կկերտեն աննախընթաց խոյանքով:

Խաղաղութեան և ընդհանուր վերաշինութեան ու բարօրութեան պայմաններու մեջ, այսօր մեր Մայր հայրենիքը ավելի քան երբեք հայ ժողովուրդի բոլոր պալականներուն հրծվանքին ու հպարտութեան առարկան է, և հույսի ու լույսի փարոսը մանավանդ ի սփյուռն աշխարհի ցրված մեր պանդուխտ եղբայրներուն և քույրերուն:

Մեր օրերուն, հայրենի խաղաղ ու ապահով պայմաններու մեջ, կհառաջդիմեն նաև եկեղեցական կյանքը շինարար գործերով:

1962-ի աշնան, Ազգային-եկեղեցական ժողովը և Սրբալույս Մեռնի օրհնությունը փայլուն ապացույց մը հանդիսացան ա՛յլ իրողութեան: Ս. Էջմիածնի մեջ տեղի ունեցող հանդիսությունները պայծառ կերպով ցույց տվին, թե ի՛նչ կնշանակէ Հայ Եկեղեցիին համար՝ ապրիլ հայրենի հարապատ պետութեան հոգածութեան տակ՝ խաղաղ, ապահով ու միակամ:

Աշխարհի բոլոր ծագերէն այստեղ հավաքված բազմահարկուր պատգամավորներ, հյուրեր և ուխտավորներ իրենց աչքերով տեսան վերաշինված ու շքեղացած Մայր Տաճարը, Ս. Հռիփսիմեն, Ս. Գայանեն, Ս. Շողակաթը, Օշականի Ս. Մեսրոպը, նոր Վեհարանը և նոր տալարանը: Տեսան այստեղ Լուսավորչի լույսին տակ եռացող հոգևոր կյանքը և հարություն առած մեր պատմութեան ոգին:

Մեր գործունեության յոթ տարիներու հանգրվանին, Մենք ավելի զորացած ու լավատես, անգամ յը ևս կվերանորոգենք Մեր ուխտը՝ շարունակելու Մեր աշխատանքը և իրագործելու հառաջիկա տարիներու այն ծրագիրը, զոր ներկայացուցինք Ազգային-եկեղեցական ժողովին:

Նոր թափով շարունակել Մայր Աթոռի շինարարական աշխատանքները, առավել ամրապնդել Հայ Եկեղեցւոյ ու ժողովրդի միասնութեան ոգին, սերտ գործակցութեամբ մեր նվիրապետական Աթոռներու, Ս. Էջմիածնի հոգևոր իշխանութեան ներքև, առավել զորացնել և կալմակերպել Սփյուռքի հայ եկեղեցական, կրթական և մշակութային կյանքը, ի խնդիր ազգապահպանման սրբազան գործին, առավել միացալ ուժերով մեր Եկեղեցւոյ մասնակցութիւնը բերել աշխարհի խաղաղութեան պահպանման գործին, առավել վարճացնել և ամրապնդել մեր

Եկեղեցվո եղբայրական սիրալիր կապերը և գործակցությունը բույր եկեղեցիներու և հատկապես Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին հետ. ահա իր ընդհանուր գիծերուն մեջ Մեր գծած ծրագիրը հառաջիկա տարիներուն համար:

Տեր Աստված հարցն մերոց, տո՛ւր մեզ վխաղաղություն բո, որպեսզի Միածին Որդվույդ Իջման տեղը առավել շենցենք ու փառավորենք, որպեսզի հայ ժողովուրդը, իր հայրենի նվիրական կտուրին տակ, նույն հանձարով ու խանդով, շարունակե իր ստեղծարար առաքելությունը իրեն եղբայրակից ժողովուրդներու մեծ միության մեջ:

Խաղաղություն, սե՛ր և միություն նաև մեր Եկեղեցիին ու Ազգին, որ ի սփյուռս աշխարհի:

Սիրելի՛ հավատացյալ վավակներ Մեր, խորհուրդներով լի այս սուրբ պահուն, երբ Քրիստոսի ծննդյան ավետիսով կբանանք դռները նոր տարիի մը, Մենք Լուսավորչի կանթեղեն լույս կբերենք ձեզի ամենուդ, որպեսզի հստակ տեսնեք ձեր կյանքի ճամբան, Հայ Եկեղեցվո ու ազգի ուղիղ ճամբան: Այդ ճամբան սիրո և միության ճամբան է, Ս. Էջմիածնի աստվածային օրհնությամբ գծված ու նվիրականացած: Հեռու մնացեք անլույս և անհույս ճամբաներե, որոնց հիմքը ավազ է ու փոշի, պատրանք և հուսահատություն:

Եթե իրավ վճռած ենք հավատարիմ մնալ մեր նախնյաց լույս հավատքին և այդ հավատքի վեմ աստվածակառույց Ս. Էջմիածնին, հայոց մայր հողին և հայոց պատմության ոգիին, ամրացնենք մեր միությունը և խաղաղություն ընենք զոնե մեր աղոթքի տունին մեջ, մեր Եկեղեցիին ներս:

Մնանք հավատարիմ մեր հավատքի վեմ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, սուսվածադիր Գլխիսը Հայաստանյայց Եկեղեցիին: Մնանք հավատարիմ մեր սուրբ ավանդություններուն և մեր լուսաբնակ հայրերու ուղիղ դավանության: Մնանք հավատարիմ մեր ժողովուրդի պատմական առաքելության, մեր հոգևոր ու ազգային նվիրական իղծերուն և մեր վերածնած Մայր Հայաստանին: Ամուր և անաղարտ և կենդանի պահենք մեր քրիստոնեական մշակույթը և մեր մայրենի լեզուն:

Փրկչի Իջման Ս. Սեդանի առաջ ծնկաչոք, կաղոթենք վասն խաղաղության աշխարհի, վասն հաստատության և միասնության Ս. Եկեղեց-

վույս, վասն բարօրության ու երջանկության մեր ժողովուրդին ու Մայր հայրենիքին:

Սիրելի՛ հավատացյալ վավակներ Մեր, կաղոթենք նաև ձեզի բոլորիդ համար անխտիր: Թող տերը ամենուդ պարգևե արևոտ երկար տարիներ, խաղաղ տարիներ, ձեր բոլոր աստվածահաճո և հայրենաշեն իղծերու լիակատար կենսագործումով:

«Աստուած յուսոյ լի արեսցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելոյ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռով. ԺԵ 13):

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Շնորհավո՛ր նոր տարի:

«Օրհնեալք եղերուք, այժմ և յաւետեան»:

Ամեն»:

Վեհափառ Հայրապետի քարոզը նույն գիշեր ձայնասփռվում է Երևանի ռադիոկայանից:

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրութեամբ կատարվում է «Ջրօրհնեաց կարգ»-ը Ավագ Ս. Սեդանի բեմի առաջ, ի հիշատակ Քրիստոսի մկրտության «ի Յորդանան գետ, ի Յովհաննէ»:

Նորին Ս. Օծուխյունն ընթերցում է Ս. Բարսեղ Կեսարացու «Օրհնութիւն ջրոյ» մեծ աղոթքը:

Ջրօրհնյաց հանդեսի արարողությունից հետո, Վեհափառ Հայրապետը, հավատացյալ ժողովրդի սրտագին աղոթքների և բարեմաղթությունների ներքո, առաջնորդվում է նոր Վեհարանի դահասրահ, ընդունելու շնորհավորություններ Ս. Մենդյան տոնի առթիվ:

Հանուն Մայր Աթոռի միաբանության, գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Հովհաննիսյանը շնորհավորում է Նորին Ս. Օծուխյան օրվա մեծ տոնի առթիվ:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը սիրով և գոհունակությամբ ընդունում է Գերագույն Հոգևոր Խորհրդի, Հոգևոր Ճեմարանի վերատեսչության, դասախոսական կազմի և ուսանողության, վանքի պաշտոնեական, Մայր Տաճարի երգեցիկ խմբի, ուխտավորների և այլ պաշտոնական անձանց շնորհավորությունները Քրիստոսի հրաշափառ Ս. Մենդյան տոնի առթիվ:

վերջում խոսք է առնում վեհափառ Հայրապետը և իր շնորհակալությունն ու գոհունակությունն է հայտնում եղած շնորհավորանքների և բարեմաղթությունների համար, օրհնում Եկեղեցին և ազգը, հայրենիքն ու ժողովուրդը և մաղթում աշխարհին խաղաղություն, ազգերին՝ համերաշխություն և Սփյուռքի հայության՝ մեկտեղում հայրենի հողի վրա, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնության ներքո:

Ժամը 3-ին, նոր վեհարանի սեղանատանը, Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի և Վերատուգիչ հանձնաժողովի անդամները, Հոգևոր Ծեմարանի դասախոսական կազմը, վանքի պաշտոնեությունը և ուխտավորներ Ստամբուլից ու Թեհրանից ու պաշտոնական այլ անձինք սեղանակից են լինում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին:

Սեղանը օրհնում է վեհափառ Հայրապետը:

Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ Միրայել Մաղմանյանը վարում է սեղանը:

Ելույթներ են ունենում Հայկական ՍՍՌ Միևիստների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը, գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, պրոֆ. Ա. Ղարիբյանը, Ստամբուլի «Ժամանակ» օրաթերթի խմբագիր Հ. Սվազլյանը, գրող Կոստան Զարյանը, բանաստեղծ Մարգար Ղարաբեկյանը (Դև, Իրանից), որը և ընթերցում է իր նոր մեկ բանաստեղծությունը Սովետական Հայաստանին նվիրված, և ուրիշներ:

Ծաղկերույթի ժամանակ Մայր Աթոռի երիտասարդ վարդապետների և սարկավազների խումբը շարականներով, տաղերով և երգերով խանդավառ մթնոլորտ է ստեղծում սեղանների շուրջ:

Ընդունելության վերջում խոսք է առնում վեհափառ Հայրապետը, ամփոփում օրվա հանդիսությունների տպավորությունն ու խոհերը:

Նորին Ս. Օծուխյան «Պահպանիչ»-ով վերջանում է այս հաճելի և բովանդակալից ընդունելությունը:

